# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Պեկին և Սեուլ գործուղման արդյունքների մասին

**• ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

**ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**• ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

**Պեկին (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն), սեպտեմբերի 13-16-ը**

**Սեուլ (Կորեայի Հանրապետություն), սեպտեմբերի 16-18-ը**

**• ՆՊԱՏԱԿԸ**

- **Մասնակցություն «Հայաստանի մշակույթի օրեր» ծրագրին**

Ս. թ. սեպտեմբերի 13-18-ը մեկնեցի Պեկին և Սեուլ՝ մասնակցելու «Հայաստանի մշակույթի օրեր» ծրագրին: Ծրագրին մասնակցեցին ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական Ներսես Դավիդյանցը և նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ Աննա Ղազարյանը: Ծրագրի ստեղծագործական մասը ներկայացրեց «Գողթ» էթնո ֆոլկ խումբը, «Տերյան» մշակութային կենտրոնը՝ նորաձևության ցուցադրությամբ (Լիլիթ Մելիքյանի ղեկավարությամբ), քանոնահարուհի Մերի Մուսինյանը:

Սեպտեմբերի 14-ին, նախքան համերգային ծրագրի սկիզբը, հանդիպում ունեցա ՉԺՀ-ի մշակույթի նախարարի օգնական Յոյ Ցյունի հետ: Հանդիպմանը ներկա էին Չինաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ

Մանասարյանը, նախարարի խորհրդական Ներսես Դավիդյանցը, դեսպանության խորհրդական Սուրեն Բաղդասարյանը, նախարարության աշխատակցուհի Աննա Ղազարյանը, ինչպես նաև Չինաստանի մշակույթի նախարարության և դեսպանության այլ աշխատակիցներ: Ցոյ Ցյունի հետ քննարկեցինք հայ-չինական մշակութային հարաբերությունները. նշեցի արդեն իսկ ձևավորված երկկողմ ջերմ և գործնական հարաբերությունների զարգացման հնարավոր բազմաբնույթ ուղղություններ: Խոսքիս մեջ կարևորեցի Հայաստանում Չինաստանի դեսպանության հետ կայուն հարաբերությունները, որոնք գտնվում են բարձր մակարդակի վրա: Հայաստանը մշտապես զգալի աջակցություն է ստանում չինական կառավարության կողմից, որոնք ուղղվում են մշակութային հաստատությունների վերազինմանը, այդ թվում՝ 2017 թ. ընթացքում Չինաստանի դեսպանության կողմից անհատույց տրամադրված 4 շարժական կինոթատրոնները և «Աուդիովիզուալ գիդ» ծրագրային հավելվածը, որոնք չինական կառավարության կողմից բավականին լուրջ ներդրում են մեր մշակութային ենթակառուցվածքների զարգացման գործում:

Կարևորեցի երկու երկրներում անցկացվող կինոփառատոներին, համերգներին, դրամաշնորհային ծրագրերին հայ և չինացի ստեղծագործողների ու երաժիշտների ակտիվ մասնակցությունը՝ նշելով նաև օտարերկրյա հրատարակչությունների համար Հայաստանում առկա գրականության թարգմանությունների դրամաշնորհի մասին: Չինացի գործընկերոջ կողմից առաջարկ հնչեց դիմել նաև չինական դրամաշնորհային ծրագրին՝ համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

Այնուհետև խոսվեց 2018թ. Գուգուն պալատ-թանգարանում նախատեսվող «Հայկական խեցեգործությունը Մետաքսի ճանապարհի հայկական հանգրվաններից» խորագրով ցուցահանդեսի մասին, որի մանրամասները քննարկվեցին հաջորդ օրը Գուգունի փոխտնօրենի հետ: Հանդիպման ընթացքում

խոսվեց նաև պեկինյան օպերան Հայաստանում ցուցադրելու մասին, որի ուղղությամբ քննարկումներ կտարվեն չինական կողմի հետ:

Երեկոյան Պեկինի համերգային դահլիճի նախասրահում բացվեց «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի հավաքածուներից կազմված հայ լուսանկարիչների «Արարատը հայի աչքերով» խորագրով ցուցահանդեսը, որին հաջորդեց «Հայաստանի մշակույթի օրեր» ծրագիրը, որը չինացի հանդիսատեսի կողմից ընդունվեց հետաքրքրությամբ:

Հաջորդ օրը հանդիպում կայացավ Գուգուն պալատ-թանգարանի փոխտնօրեն Լոու Վեյի հետ: Հանդիպմանը ներկա էին Հայաստանում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Մանասարյանը, նախարարի խորհրդական Ներսես Դավիդյանցը, նախարարության աշխատակցուհի Աննա Ղազարյանը, ինչպես նաև Հայաստանում Չինաստանի դեսպանության և Գուգուն պալատ-թանգարանի մի շարք աշխատակիցներ:

Հանդիպման սկզբին քննարկվեց 2018թ. կայանալիք «Հայկական խեցեգործությունը» խորագրով ցուցահանդեսի կազմակերպման մանրամասները՝ մասնավորապես՝ ցուցահանդեսի հայեցակարգը, ցուցանմուշների նախնական ընտրությունը, որոնք կանխավ դիվանագիտական կապուղիներով փոխանցվել էին Գուգուն պալատ-թանգարանի տնօրինությանը:

Գուգուն պալատ-թանգարանի փոխտնօրեն Լոու Վեյը նշեց, որ Հայաստանն ու Չինաստանն ունեն դարավոր պատմական կապեր, և երկու երկրների հարուստ մշակութային ժառագությունը մշտապես ցուցադրվել է երկու երկրներում և մեծ հետաքրքրության առաջացրել երկու ժողովուրդների մոտ: Առաջարկ հնչեց 2017թ. աշնանը մշակութային ժառանգության ոլորտի մասնագետ հրավիրել Չինաստան, ով կմասնակցի այլ երկրների մասնագետների հետ թանգարանային առարկաների վերականգնման վերապատրաստման դասընթացներին: Նա նշեց, որ

նախընտրելի կլինի Գուգուն պալատ-թանգարանի ցուցանմուշները ցուցադրել Հայաստանում 2018թ., որոնց վերջնական ցանկը կքննարկվի բանակցությունների ընթացքում: Առաջարկվեց Հայաստանի պատմության թանգարանի ցուցանմուշների ցուցահանդեսը կազմակերպել Գուգուն պալատ-թանգարանում 2018թ. աշնանը: Չինական կողմը հայտնեց, որ արդեն իսկ ունի որոշված 2017-2020թթ. գործողությունների ծրագիր, համաձայն որի՝ հայկական կողմի ցուցահանդեսը ամենայն հավանականությամբ կներառվի գործողությունների ծրագրում:

Որոշվեց ևս մեկ անգամ քննարկել ցուցահանդեսի թեմատիկան, անցնել անմիջապես առավել գործնական փուլի քննարկումներին և այդ նպատակով Հայաստան հրավիրել չինացի մասնագետների, ովքեր տեղում կաշխատեն հայ մասնագետների հետ և վերջնական կորոշեն տեխնիկական հարցերը, ցուցահանդեսի հայեցակարգը և ցուցանմուշների վերջնական ցանկը:

Գուգուն թանգարանի փոխտնօրենն առաջարկեց նաև չինական ցուցանմուշներով Հայաստանում կազմակերպել ցուցահանդես, որը կարող է լինել հաջորդ տարիներին չինական մշակույթի օրերի շրջանակում:

Սեպտեմբերի 16-ին պատվիրակությունը և ստեղծագործական կազմը մեկնեցին Սեուլ: Ճապոնիայում և Կորեայում ՀՀ դեսպան Հրանտ Պողոսյանի և դեսպանության աշխատակից Երվանդ Մարկոսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիպում տեղի հայ համայնքի հետ:

Սեպտեմբերի 17-ին Սեուլի Սանգմյունգ արվեստի սրահում վերստին կայացավ «Հայաստանի մշակույթի օրեր» ծրագիրը, որն անցկացվեց «Գողթ» էթնո ֆոլկ խմբի երաժշտական համարներով, «Տերյան» մշակութային կենտրոնի պատրաստած հայկական տարազներով և քանոնահարուհի Մերի Մուսինյանի

մասնակցությամբ: Զուգահեռաբար դահլիճի նախասրահում ցուցադրվեց «Արարատը հայ լուսանկարիչների աչքերով» ցուցահանդեսը:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- Մասնակցություն «Հայաստանի մշակույթի օրեր» ծրագրին Պեկինում և Սեուլում:
- Պայմանավորվածություն՝ իրականացնելու համատեղ նոր գրական թարգմանություններ՝ նկատի ունենալով մեր երկրներում գործող թարգմանությունների աջակցության մեխանիզմները:
- Գուգուն պալատ-թանգարանի հետ պայմանավորվածություն՝ ցուցադրելու իրենց ցուցանմուշները Հայաստանում՝ առաջիկայում կազմակերպվելիք Չինաստանի մշակույթի օրերի շրջանակում և Հայաստանի պատմության թանգարանի ցուցանմուշները Գուգուն պալատ-թանգարանում:
- Պայմանավորվածություն՝ 2017 թ. Գուգուն պալատ-թանգարանում կայանալիք վերապատրաստման դասընթացներին հայ մասնագետների մասնակցության վերաբերյալ:

**Ստորագրություն, ամսաթիվ**

Ներսես Տեր-Վարդանյան, 22.09.2017թ.